ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՍՊ-ԲԸԱՀ 101-2017

ք. Երևան «-2-» մարտի 2017 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Գնորդ, մի կողմից, Ա/Ձ Գոհար Արամյանը, այսուհետ՝ Վաճառող, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված № 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի № 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տնտեսական, սանիիգիենիկ և լվացքի միջոցները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված № 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին և/կամ Ստացողին Պայմանագրի № 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին և/կամ Ստացողին՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 **Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 **Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը.

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից.

3.2.5 պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3.3 **Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից և/կամ Ստացողից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով.

3.3.3 Գնորդից և/կամ Ստացողից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն Պայամագրի պայմանները,

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները.

3.3.5 Գնորդի և/կամ Ստացողի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 772265 (յոթ հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն.

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և

---

[1] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ,

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.11 Պայմանագիրը կազմված է 15 (տասնհինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011059186 ՀՎՀՀ 02586282	Ա/Ձ Գոհար Արամյան, ք. Երևան, Վարդանանց 109/21, հեռ.՝ 099402959,077769990 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 205043202261 ՀՎՀՀ 30956993 E-mail: kananyan0102@mail.ru
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ Գ.Արամյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված № 1
«2» նոյեմբեր 2017թ. կնքված
№ ՍՊ-ԲԸԱՀ գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ

№	Ձեռք բերվող ապրանքի անվանումը	Քանակը և չափման միավորը	Տեխնիկական բնութագիրը
1.	Մարտկոց AAA տեսակի	10 հատ	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5 Վ, AAA ալկալիական, առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով, Duracell կամ համարժեքը
2.	Մարտկոց AA տեսակի	10 հատ	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5 Վ, AA ալկալիական, առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով, Duracell կամ համարժեքը
3.	Լամպ հայելատիպ՝ շիկացած թելիկով, 60 Վտ, R 63, E27, 220 Վ	100 հատ	Հայելապատ լամպ՝ (220-240 Վ) լարման, 60 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, թափանցիկ, տանձաձև կամ սնկաձև, կոթառը E 27/27 տիպի, համապատասխան երկարությամբ կամ համարժեքը: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
4.	Էլեկտրական լամպ	65 հատ	Էլեկտրական լեդ լամպ անթափանց (170-265 Վ) լարման, 8 Վտ հզորությամբ, կոթառը E 27/27 տիպի, ЭРА LED smd R63-8w-827-E27 ECO (10/100/1500), լուսատվության ջերմություն 2700-3200 Կելվին, 2 տարի երաշխիքով կամ համարժեքը: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
5.	Տնտեսող լամպեր	80 հատ	Էլեկտրական լեդ լամպ անթափանց (170-265 Վ լարման), 7 Վտ հզորությամբ, կոթառը E 27/27 տիպի, ЭРА LED smd P45-7w-827-E27 (6/60/2400), լուսատվության ջերմություն 2700-3200 Կելվին, 2 տարի երաշխիքով կամ համարժեքը՝ 40 հատ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
			Էլեկտրական լեդ լամպ անթափանց (170-265 Վ լարման), 7 Վտ հզորությամբ, մոմաձև, ЭРА LED smd B35-7w-827-E14 (6/60/2640), լուսատվության ջերմություն 2700-3200 Կելվին, 2 տարի երաշխիքով կամ համարժեքը՝ 20 հատ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:

			Էլեկտրական լամպ անթափանց (170-265 Վ լարման), 7 Վտ հզորությամբ, մոմաձև, ЭРА LED smd MR16-6w-827-GU5.3 (10/100/4000), լուսատվության ջերմությունը՝ 2700-3200 Կելվին, 2 տարի երաշխիքով՝ 20 հատ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
6.	Ցերեկային լամպ՝ 60 սմ	20 հատ	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 20, 25 և 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, 60 սմ երկարությամբ, ԳՕՍ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
7.	Ցերեկային լամպ՝ 120 սմ	10 հատ	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ ուղիղ, օղակաձև կամ U- ձև G-13 տիպի լամպակոթով, 20, 25, 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, 120 սմ երկարությամբ ըստ ԳՕՍ 6825-91 կամ համարժեքը: Անվտանգությունը՝ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
8.	Լամպերի կոթառներ	30 հատ	Էլեկտրական կոթառներ՝ լամպը պտուտակելով էլեկտրական հոսանքին միացնելու համար
9.	Եռաբաշխիչ, վարդակին միացվող, առանց լարի	5 հատ	Վարդակին միացվող եռաբաշխիչ՝ առանց լարի, նախատեսված 220-250 Վ լարման հոսանքի համար, 6 Ա հզորությունից ոչ պակաս:
10.	Վարդակ	10 հատ	Վարդակ երկբևեռանի, 1 կամ 2-տեղանոց պլաստմասսայե UL-94V, 1 port RJ11 բնիկով, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ՝ կաթնագույն: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
11.	Էլեկտրական երկարաց–ման լար	10 հատ	Երկարացման լար, ֆիլտրով, երեք տեղանոց կամ համարժեքը: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
12.	Խրոց սովորական	10 հատ	Էլեկտրական խրոց՝ 6,3/10 Ա, 250 Վ, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի № 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:
13.	Ծորակներ	6 հատ	Լվացարանի խառնիչային ջրի ծորակ, քրոմապատ, նյութը՝ լատուն, արծաթագույն կամ համարժեքը:
14.	Ջրի ծորակ, փական	5 հատ	Ջրի փական (բռնակով), տարբեր չափերի, խառնիչային կամ համարժեքը:

15.	Դռան փականներ	20 հատ	Դռան բռնակ՝ 12 սմ:
16.	Կողպեքի մասեր	15 հատ	Կողպեքի միջուկ՝ երկարությունը 7 սմ:
17.	Կողպեքի մասեր	15 հատ	Կողպեքի միջուկ՝ երկարությունը 9 սմ:

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Էլոյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Գոհար Արամյան,
ք. Երևան, Վարդանանց 109/21,
հեռ.՝ 099402959,077769990
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205043202261
ՀՎՀՀ 30956993
E-mail: kananyan0102@mail.ru

Տնօրեն՝

Գ.Արամյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 2
2017 թ. Հունվար «2» -ին կնքված
N ՍՊ-ԲԸՍՀ – 101 – 2017 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը				1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ		3-րդ եռամսյակ		4-րդ եռամսյակ		Ընդամենը	
N	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը (դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ. դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Գինը (ՀՀ դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Մարտկոց AAA տեսակի	հատ	500	10	5,00	0	0,0	0	0,0	0	0,0	10	5,000
2	Մարտկոց AA տեսակի	հատ	500	10	5,00	0	0,0	0	0,0		0,0	10	5,000
3	Լամպ հալոգենային՝ շիկացած թելիկով, 60 Վտ, R 63, E27, 220 Վ	հատ	830	100	83,00	0	0,0	0	0,0	0	0,0	100	83,000
4	Էլեկտրական լամպ	հատ	3350	65	217,75	0	0,0	0	0,0	0	0,0	65	217,750
5	Տնտեսող լամպեր	հատ	1500	80	120,00	0	0,0	0	0,0		0,0	80	120,000
6	Ցերեկային լամպ՝ 60 սմ	հատ	900	20	18,00	0	0,0	0	0,0	0	0,0	20	18,000
7	Ցերեկային լամպ՝ 120 սմ	հատ	1200	10	12,00	0	0,0	0	0,0	0	0,0	10	12,000
8	Լամպերի կոթառներ	հատ	500	30	15,00	0	0,0	0	0,0	0	0,0	30	15,000
9	Էռոթաշխիչ, վարդակին միացվող առանց լարի	հատ	253	5	1,27	0	0,0	0	0,0		0,0	5	1,265
10	Վարդակ	հատ	2000	10	20,00	0	0,0	0	0,0	0	0,0	10	20,000
11	Էլեկտրական երկարացման լար	հատ	2500	10	25,00	0	0,0	0	0,0	0	0,0	10	25,000
12	Թրոց սովորական	հատ	300	10	3,00	0	0,0	0	0,0	0	0,0	10	3,000
13	Ծորակներ	հատ	15000	6	90,00							6	90,000
14	Ջրի ծորակ, փականներ	հատ	3450	5	17,25							5	17,250
15	Դռան փականներ	հատ	2500	20	50,00							20	50,000
16	Կոդպեքի մասեր	հատ	2500	15	37,50							15	37,500
17	Կոդպեքի մասեր	հատ	3500	15	52,50	0		0	0,0	0	0,0	15	52,500
	ԸՆԴԱՄԵՆԸ				772,27	0	0	0	0	0	0		772,265

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Արովյան 9

Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ 02586282
Աշխատակազմի ղեկավար

Վ. Էդոյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Գոհար Արամյան,
ք. Երևան 0070, Վարդանանց 109/21

հեռ.՝ 099402959,077769990
«Ինեկորանկ» ՓԲԸ
Հ/Հ 205043202261
ՀՎՀՀ 30956993

Տնօրեն՝

Գ. Արամյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
2017 թ. « 2 » -ին կնքված
N ԱԴ-ԲՈՒԱՀ -101-2017 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Անող. Հազ.ՀՀ դրամ

N	Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ըստ որում											
			1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ		
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
	1	3 = (4:15)	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Մարտկոց AAA տեսակի	5,000			5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
2	Մարտկոց AA տեսակի	5,000			5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
3	Լամպ հալոգենային՝ շիկացած թելիկով, 60 Վտ, R 63, E27, 220 Վ	83,000				29,000	29,000	29,000	50,000	50,000	50,000	83,000	83,000	83,000
4	Էլեկտրական լամպ	217,750							131,000	131,000	131,000	217,750	217,750	217,750
5	Տնտեսող լամպեր	120,000							72,000	72,000	72,000	120,000	120,000	120,000
6	Ցերեկային լամպ՝ 60 սմ	18,000				6,300	6,300	6,300	10,800	10,800	10,800	18,000	18,000	18,000
7	Ցերեկային լամպ՝ 120 սմ	12,000				5,000	5,000	5,000	7,200	7,200	7,200	12,000	12,000	12,000
8	Լամպերի կոթառներ	15,000				5,000	5,000	5,000	9,000	9,000	9,000	15,000	15,000	15,000
9	Եռաբաշխիչ, վարդակին միացվող, առանց լարի	1,265				1,265	1,265	1,265	1,265	1,265	1,265	1,265	1,265	1,265
10	Վարդակ	20,000				7,000	7,000	7,000	12,000	12,000	12,000	20,000	20,000	20,000
11	Էլեկտրական երկարացման լար	25,000				4,000	4,000	4,000	15,000	15,000	15,000	25,000	25,000	25,000
12	Խրոց սովորական	3,000			3,00	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
13	Ծորակներ	90,000										90,000	90,000	90,000
14	Ջրի ծորակ, փական	17,250				7,000	7,000	7,000	10,400	10,400	10,400	17,250	17,250	17,250
15	Դռան փականներ	50,000										50,000	50,000	50,000
16	Կողպեքի մասեր	37,500							15,000	15,000	15,000	37,500	37,500	37,500
17	Կողպեքի մասեր	52,500										52,500	52,500	52,500
	ԸՆԴԱՄԵՆԸ	772,265	0,000	0,000	13,000	77,565	77,565	77,565	346,665	346,665	346,665	772,265	772,265	772,265

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության [illegible] հարցերի նախարարություն

ք. Երևան, [illegible]

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011059196

ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար

Վ. Էլոյան

(ստորագրություն)

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Գոհար Արամյան,

ք. Երևան 0070, Վաղարշյանց 10/3/2

հեռ.՝ 099402959,077769990

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 205043202261

ՀՎՀՀ 30956993

Տնօրեն՝

Գ. Արամյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված 4
«----» ---------- 2017թ. կնքված
№ ՍՊ-ԲԸԱՀ ---------- *գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
Ա/Ձ Գոհար Արամյան,
ք. Երևան, Վարդանանց 109/21,
հեռ.՝ 099402959,077769990
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 205043202261
ՀՎՀՀ 30956993
E-mail: kananyan0102@mail.ru

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011059186
ՀՎՀՀ 02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի № եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

№	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն անուն

Կ.Տ. Կ.Տ.

Հավելված 4.1
«-------» ---------- 2017թ. կնքված
№ ՍՊ-ԲԸԱՀ *գնման պայմանագրի*

ԱԿՏ №

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված № ------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____ստորագրություն